«ՄՈԳՈ» ՈՒՎԿ ՍՊԸ

2026թ. Հունիսի 25-ի

«ՄՈԳՈ» ՈՒՎԿ ՍՊԸ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ «ԱՇԽԱՐՀԻ ԳԱՎԱԹԻ ԽԱՂԱՐԿՈՒԹՅԱՆ» ԱԿՑԻԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաստատել՝

1. «ՄՈԳՈ» ՈՒՎԿ ՍՊԸ-ն կազմակերպում է «Աշխարհի Գավաթի Խաղարկության» մրցույթ (այսուհետ՝ Ակցիա):
2. Ակցիայի մասնակցության պայմանները՝
   - Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության բոլոր այն քաղաքացիները, որոնց 18 տարին լրացել է մրցույթին մասնակցելու դիմումը տալուն նախորդող օրը:
   - Մրցույթին մասնակցությունն անվճար է, վարկի կամ այլ ֆինանսական ծառայության ձեռքբերմամբ/դիմումով պայմանավորված չէ:
   - Մրցույթին չեն կարող մասնակցել «ՄՈԳՈ» ՈՒՎԿ ՍՊԸ տվյալ պահի դրությամբ գործող աշխատակիցները:
   - Մրցույթի մեկնարկը 2026 թվականի հունիսի 26-ին է և ավարտվում է 2026 թվականի հուլիսի 14-ին:
   - Մրցույթի արդյունքներն ամփոփվում են 2026 թվականի հուլիսի 23-ին՝ 15:00-ին:
3. Մրցույթի կանոնները՝
   - «ՄՈԳՈ» ՈՒՎԿ պաշտոնական կայքի mogo.am/world-cup էջում մասնակիցը պատասխանում է հետևյալ հարցին՝ «Ո՞վ կհաղթի ԱԱ 2026-ում և քանի՞ գոլ կխփի մրցաշարի ամբողջ ընթացքում»:
   - Հաղթող երկրի անունը պետք է լինի հայատառ: Օրինակ՝ «Հայաստան 10»:
   - Հաղթող հավաքականի խփած գոլերի ընդհանուր քանակը որոշվում է FIFA-ի պաշտոնական վերջնական վիճակագրության հիման վրա: Հաշվարկում ներառվում են հիմնական և լրացուցիչ ժամանակում խփված գոլերը, սակայն չեն ներառվում հետխաղյա 11-մետրանոց հարվածաշարի ընթացքում գրանցված գոլերը:
   - Մասնակիցը լրացնում է նաև անուն ազգանունը, էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը:
   - Յուրաքանչյուր ֆիզիկական անձ կարող է ներկայացնել միայն մեկ մասնակցության հայտ: Նույն անձի կողմից ներկայացված մի քանի հայտերի դեպքում վավեր է համարվում Կազմակերպչի համակարգում ժամանակագրական առումով առաջին գրանցված հայտը:

   - Եթե ճիշտ պատասխանը նշել են մեկից ավելի մասնակիցներ, ապա հաղթողը որոշվում է ՄՈԳՈ ՈՒՎԿ պաշտոնական ֆեյսբուքյան եթերում՝ օնլայն գործիքի միջոցով պատահականության սկզբունքով ընտրելով հաղթողին:
   - Եթե ոչ մի մասնակից ճշգրիտ պատասխան չի ներկայացրել, ապա հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որը ճիշտ է գուշակել աշխարհի գավաթակիր երկիրը, իսկ նշված գոլերի քանակը ամենամոտն է:

- Եթե ոչ մի մասնակից ճիշտ երկիրը չի գուշակել, ապա մրցույթի արդյունքներով հաղթող չի ճանաչվում ոչ մի մասնակից:

4. Հաղթողը կազմակերպության կողմից ստանում է նվեր՝ iPhone 17 256GB Sage eSim կանաչ գույնի հեռախոս:
5. Հաղթողը մրցանակը ստանալու համար անձը հաստատող փաստաթղթով մոտենալու է «ՄՈԳՈ» ՈՒՎԿ «Կենտրոն» մասնաճյուղ՝ ք. Երևան, Չարենցի 121/3 հասցեով:
6. Որակազրկման և չարաշահումների կանխման վերաբերյալ՝
    - Մրցույթի արդար, հավասար և թափանցիկ անցկացումն ապահովելու նպատակով Կազմակերպիչն իրավունք ունի իրականացնել ներկայացված հայտերի համապատասխանության ստուգում:
    - Մասնակիցը կարող է որակազրկվել, եթե՝ մասնակցության հայտը ներկայացվել է ավտոմատացված ծրագրային միջոցների միջոցով, կատարվել է մրցույթի կայքի մանիպուլյացիա, ներկայացվել են կեղծ տվյալներ, կամ խախտվել է մեկ անձ-մեկ հայտ պահանջը:
    - Որակազրկման մասին որոշումը պետք է հիմնված լինի ստուգելի փաստերի վրա, ձևակերպվի գրավոր և ուղարկվի մասնակցին:
    - Մասնակիցն իրավունք ունի 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գրավոր առարկություն, որին Կազմակերպիչը պատասխանում է 10 (տաս) աշխատանքային օրում:
7. Անձնական տվյալների մշակումը՝
    - Մրցույթի մասնակիցը կարող է տալ համաձայնություն մարքեթինգային նպատակով անձնական տվյալների մշակման հարցում, որի դեպքում կազմակերպությունը կարող է ուղարկել հատուկ առաջարկներ SMS, Email, Whatsapp կամ Viber հարթակների միջոցով:
    - Հաղթող մասնակիցը տալիս է համաձայնությունը, որ կազմակերպությունը օգտագործի նրա անունը, լուսանկարը՝ հրապարակային հարթակներում հայտարարելու նպատակով:
    - Հաղթողը պարտավոր է Կազմակերպչի առաջին ծանուցումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում հաստատել մրցանակն ընդունելու իր պատրաստակամությունը:
8. «ՄՈԳՈ» ՈՒՎԿ ՍՊԸ-ն վճարում է խաղարկության մրցանակից առաջացած եկամտահարկը:
9. Apple Inc. կազմակերպությունը սույն մրցույթի հովանավորը, կազմակերպիչը կամ որևէ կերպ առնչվող կողմ չի հանդիսանում: